Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ Վայոց ձորի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կազմում Ջերմուկ համայնքի ավագանու կողմից ոչ պետական հատվածը ներկայացնող անդամ առաջադրելու համար մրցույթ անցկացնելու մասին

ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմը հայտարարում է մրցույթ ՀՀ Վայոց ձորի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կազմում Ջերմուկ համայնքի ավագանու կողմից ոչ պետական հատվածը ներկայացնող անդամ առաջադրելու մասին:

Խորհրդի ոչ պետական հատվածը ներկայացնող անդամը պետք է լինի 16-ից 30 տարեկան երիտասարդ և պետք է բավարարի հետևյալ չափանիշները՝

1. Երիտասարդներին առնչվող կրթական, սոցիալական, զբաղվածության, առողջապահական և մշակութային խնդիրներին տիրապետելը
2. Երիտասարդական կազմակերպություններում տարբեր ծրագրերին կամ միջոցառումներին մասնակցության փորձ
3. Երիտասարդական քաղաքականության բնագավառում միջազգային փորձի, պետական և հանրային կառավարման համակարգի, ծրագրերի մշակման, իրականացման և գնահատման առանձնահատկությունների իմացություն: Հավասար պայմանների դեպքում որպես առավելություն են դիտվում Երիտասարդական քաղաքականության բնագավառում իրականացված փորձագիտական աշխատանքները կամ հրապարակումները, ոչ ֆորմալ կրթության ոլորտի գիտելիքները և գործնական աշխատանքի փորձը:

Մրցույթը կկայանա 2018 թվականի նոյեմբերի21-ին:

Մրցույթին մասնակցել ցանկացողները կարող են դիմել Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմին հետևյալ հասցեով՝ ք. Ջերմուկ, Մյասնիկյան փողոց N 8 շենք, հեռախոս՝ 060747077:

Դիմումների տրման վերջնաժամկետն է՝ 2018թվականի նոյեմբերի 16-ը: Դիմող քաղաքացիները Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմ պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

ա/դիմում համայնքապետարանի աշխատակազմի անունով /դիմումի ձևը ազատ է/,
բ/խորհրդի անդամին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի/ների/, վկայականի/ների/ պատճենները՝ բնօրինակների հետ միասին,
գ/մեկ լուսանկար՝ 3X4 սմ չափի,
դ/անձնագրի պատճեն:

Քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր:
Քաղաքացիները մրցույթին ներկայանում են անձնագրով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 9.00-ից մինչև 18.00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմ